պարարտացնելու գործում մեկմեկու օգնել. այդ անհրաժեշտ է, եթե աչքի առաջ ունենան իւրեանց ընդհանուր օգուտը։

Ի դէպ, այստեղ հարկաւոր է խօսել նաև խոտացանքի ունեցած բարերար ազդեցութեան վրայ երաշտի դէմ։ Խոտաւէտ դաշտերը աւելի լաւ կարող են թարմացնել իւրեանց շուրջը եղած օդը, քան հացաբոյսերը։ Բացի դրանից խոտ ցանած դաշտերի հողերը աւելի երկար կարող են պահել իւրեանց մէջ գարնանային ջրերը։ Ահա թէ ինչու երաշտի դէմ կռուելու համար անհրաժեշտ է նաև խոտ ցանած հողեր։ Այն տեղերում, որտեղ գիւղացիները թողել են երկրագործութեան նախկին եղանակը և սկսել են ութ տարի անընդհատ առաջ ցանել, երաշտը աւելի քիչ է երևան գալիս և համարեա անբերրութիւն տեղի չի ունենում։ Կարծեմ այդ հասկանալի է. նախ և առաջ այստեղ հողը հանգստանում է ոչ թէ իւրաքանչիւր երկու տարուց յետոյ, այսինքն երրորդ տարում, այլ ամէն տասը տարուց յետոյ. հետևապէս և տասն և մէկերորդ տարում և համարեա տասն տարի անընդհատ ցանելով, հողը աւելի քիչ ենթակայ կլինի չորութեան, քան նախկին ձևի վարուցանքի ժամանակ։ Երկրորդ օգուտն էլ այն է, որ գիւղացին շատ խոտ ունենալով, շատ անասուն էլ կպահէ. ուստի և կստացուի դաշտեր պարարտացնելու համար աւելի աղբ։ Վերջապէս խոտաւէտ դաշտերը անտառի պէս զովացնում են օդը, ուստի և այդ տեղերում ցօղը աւելի առատ է լինում, իսկ լաւ ցօղ եղած ժամանակը դժուար չի լինիլ դիմանալ երաշտի։

Գ. Ղ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

Դոյների եւ բուրմանց միկրոբներ.— ԺԹ.-րդ դարը միկրոբների և բացիլների շրջան է. թէ բնութիւնը և թէ մարդկային երևակայութիւնը լի է այդ անտեսանելի արարածոց անհամար բազմութեամբ. իրաւ ո՞ւր ասես որ այժմ միկրոբ չի կասկածուում։ Ահա եղեր է մի բրազիլիացի բժիշկ՝ Դոմինկոյ Փրէյրէ անուամբ, որ երկար ուսումնասիրելով դեղին տենդի միկրոբները, հետաքրքիր մի գիւտ է արել, գտել է այդ անտեսանելի արարածներին ծաղիկների վերայ ևս, ուր նոքա անթիւ բազմութեամբ թագաւորում են։ Ուրեմն թող ծաղիկ սիրողները զգուշանա՞ն։

Դոմինկոյ վեր առաւ սովորական ծաղիկներ, որից փնջեր են պատրաստում սեղան, կուրծք զարդարելու կամ նոցա բուրմունքը վայելելու համար. հանեց նոցա առէջքներն ու սերմնաբանները և դրեց միկրոբների համար յատուկ պատրաստուած բոզեանի մէջ։ Ծաղիկները քաղել էր Ռիո—Ժանեյրոյից 6 վերստ հեռի և ծովի մակերևոյթից 25 սաժէն բարձր գտնուող մի պարտիզից։ Կարճ ժամանակում բոզեանում երևացին բազմաթիւ հիւրեր, որոց թուում մինչև այժմ չտեսնուած ցեղեր. արդեօք նոքա կդաւաճանե՞ն ծաղկասէրներին, երբ վերջիններս ընդունեն իրենց թոքերի դահլիճներում թէ ոչ, դա անյայտ է։ Վարդերի սիրահարները գոնէ պիտի զգուշանան դաւաճանութիւնից, որովհետև ծաղիկների թագուհին՝ ինչպէս երևում է, սիրում է իւր քնքոյշ թերթիկները նուիրել հոտած ջրերի միկրոբներին, որոնք կասկածելի են։ Զարմանալի է դեղին վարդի ճաշակը. դուրս է գալիս, որ դա էլ հոտած ճահիճների միկրոբներ է հիւրասիրում։ Միկրոբների ներկայութիւնը ծաղկանց գրկում պատահական երևոյթ չէ. գուցէ նրանց կեանքում էլ դեր են կատարում այդ հսկաները. Փրէյրէ փորձերից այն եզրակացութեանն է եկել, որ գոյն և բուրումն նոցա արդիւնքն է։ Զոր օրինակ՝ «Բոշիլլ» կոչուած վարդը ճիշտ այն գոյնն ունի, ինչ որ նոքա վերայ գտնուած միկրոբը։ Զինական դեղին վարդը (Libueus) և նոքա պսակաթերթի վերայ ապրող միկրոբը միագոյն են։ Այդ դեռ քիչ է. միկրոբի մի քանի տեսակները արհեստական լուծման ժամանակ հենց այն ծաղկանց բուրմունքն են տարածում, որոնց վերայ մեծ քանակութեամբ ապաստանել են։ Փիտութեանը արդէն յայտնի է, որ որոշ գոյնի նիւթ—պիկմենտ և բարդ քիմիական մարմիններու ցքի և քացախ իրենց գոյութիւնը բացառապէս միկրոբներին են պարտական։ Ուրեմն ի՞նչ զարմանք, եթէ ծաղիկների գոյնն ու հոտը նոյնպէս բնութեան այդ անտեսանելի լեղափոխականների գործն է։ Հետաքրքիր է ժողովրդի հայեացքը ծաղկանց գուշակութեան վերաբերմամբ։

* * *

Արմի բոյն.—Ամենից շատ է տարածուած և կեանքի անհրաժեշտ պայման է դարձած կլայեկած պղինձը խոհանոցի կարասեաց մէջ։ Բայց ի՞նչ մեծ վտանգ։ կեանքի յարատև սպառնալիք է դա։ քչերն են մտածում կամ իմանում։ Բաւական է մի փոքր ազահութիւն կլայեկողի կողմից։ հետևանքը մահ է։ Բաւական է, որ մի քիչ արճիճ խառնէ անագին (արճիճը անհամեմատ էժան է անագից) և զօրեղ թունը պատրաստ է. որովհետև արճիճը ամենափոքր թթու նիւթի մէջ լուծուում է և սուր երկարատև խիթքեր է յառաջացնում մարդու ստամոքսում։ որի դէմ դեռ ոչ մի բժշկական միջոց չի

գանուել, և վերջն էլ մահ է պատճառում։ Եւ որքա՜ն դիւրութիւն կայ կեղծելու. 40 % արձաթի անգամ խառնուրդ լինի անագի մէջ աննկատելի կմնայ. բայց վտանգը մեծ է։ Մի կին Պարիզում թունաւորուել էր քթախոտը այդպիսի տիւում պահելուց։ Ուստի բժիշկներից շատերը առաջարկում են, աւելի լաւ է թողնել պղինձը անկլայեկ, քան մահուան սպառնալիքով փայլած. քանի որ մաքուր սրբած պղնձից ոչ մի վտանգ չկայ։ Եթէ եփելուց յետոյ կերակուրը անմիջապէս հեռացուի։

Բայց մարդիկ ինչից գլուխ չեն հանել, որ այդ սպառնալիքի բանալին չգտնէին. Այս օրերս Պարիզի մի ուսուցչապետ գտել է և իւրաքանչիւր աշխարհի յայտնում է կեղծիքը գտնելու միջոցը։

Պէտք է մի քիչ քերել կլայեկած տեղից (արծաթ 15 կոպէկանոցի չափ) և քերած տեղը քացախ լեցնել և թողնել 3—8 րոպէ. ապա առնել քացախը բաժակի մէջ և խառնել շատ քիչ ծծմբային կալի (դեղատներում յայտնի է „сѣрная печень" անուամբ)։ Եթէ կլայեկի մէջ արծիճ լինի, իսկոյն կլուծուի քացախի մէջ. իսկ յիշեալ ծծմբային կալու ազդեցութեամբ քացախը կստանայ մոխրի, նոյն իսկ սև գոյն, որովհետև արծաթին բաղադրութիւն ունեցող քացախից արծիճը զատուում է։ Իսկ եթէ կլայեկը մաքուր է, կալու խառնուրդից յետոյ քացախը կստանայ դեղնաւուն գոյն։ Այս իմանալով հանդերձ՝ գիւղը կամ քաղաքը անտարբեր չպիտի մնայ կլայեկչիների վերաբերմամբ, այլ կանոնաւոր խիստ վարչական հսկողութիւն ամենից ապահով միջոցն է վտանգի դէմ։

* * *

Ռեօնտկենի ճառագայթները բժշկութեան մէջ —Դեռ Ռէնտկէն իւր նշանաւոր գիւտը չէր արել, որ Մոսկուայի մի Շտէյն անունով բժիշկ գտել էր, թէ ելեկտրական լապտերով կոկորդի անեսթեզիա (Anesthesia) կարելի է յառաջացնել. հարկաւ նրան մութ էր դրա իսկական պատճառը։ Յետոյ Դանիայում բժիշկ Ֆենսէն յաջողութեամբ կարողացաւ բժշկել՝ էլի ելեկտրական լապտերով գայլուկ (lupus, волчанка) կոչուած՝ ցարդ անբուժելի մի հիւանդութիւն։ Անցեալ տարուայ մարտ ամսին Բեռլինի մի բժիշկ՝ Բելով գտաւ, որ ելեկտրական սաստիկ լոյսը՝ Ռէօնտկենի ճառագայթներով հարուստ՝ մեծ թեթևութիւն է տալիս կաշուի հիւանդութեանց, ասկրացաւի, սիֆիլիսի և գայլուկի։

Նոյնպէս նկատել են, որ այդ ճառագայթների երկար ազդեցութիւնը տարև խփելու ներգործութիւն է անում, սաստիկ կարմրցնում կաշին. իմացել են նոյնպէս, որ մեծապէս ազդում է սրտի վերայ, սրտի բարախումը անտանելի սաստկանում է։ Պլինիկայի բժիշկներ և ուսուցչապետներ հաստատել են արդէն գայլուկի բուժումը այդ միջոցով։ Սակաւարեան հիւանդութիւն, անբուժելի ուռոյցքներ, նոյն իսկ «խեցգետին» (բակ) կոչուած ախտը ենթարկուում են իկս—ճառագայթների ազդեցութեան։ Փորձեր արին թոքախտի վերաբերմամբ. հետևանքը շատ տարբեր է եղել. շատ բժիշկներ սակայն յամառութեամբ շարունակում են իրենց փորձերը լաւ հետևանքի հասնելու յուսով։

Բացի ուղղակի ազդեցութիւնից Իկս-ճառագայթները կողմնակի օգուտներ էլ բերում են. կան դեղեր, որ կարելի է Ռէօնտկենի գործիքով տեսնել մարմնոյ մէջ գործելիս. ուրեմն գտել են միջոց քայլ առ քայլ հետևելու դեղի՝ մարմնոյ մէջ տարածուելուն և ներգործելուն։ Վիրաբուժական գործում աւելորդ է կրկնել նոցա մեծ կարևորութիւնը, որ հազար անգամ մատնացոյց է եղած։ Ամերիկայում ուղել են բժշկել կոյրերին. իրաւ որ կոյրերը այդ ճառագայթների ազդեցութեամբ մի բան զգում են, բայց դա շատ հեռի է տեսութեան նման մի բան լինելուց։

* * *

Թէ ինչպէս պէտք է բժշկել ծառերի վերայ յամախ պատահող խաղցկեղ (ракъ) *անուանուած հիւանդութիւնը։*—Ընդհանրապէս բոլոր, բայց առաւել պտղատու ծառերի վերայ պատահող այլ և այլ վնասակար հիւանդութիւններից առանձնապէս ուշադրութեան արժանի է քաղցկեղ անուանուած հիւանդութիւնը։ Նա քայքայում է համարեա ծառի ամբողջ բնափայտը։ Այդ հիւանդութեամբ վիրաւորուած տեղը ուռչում է և նրանից առանձին տեսակի հիւթ է դուրս ծորում, որ արդէն նշան է, թէ վէրքը թարախակալուած է։ Քաղցկեղը վնասում է ոչ միայն ծառի բնին, այլ և նորա բոլոր հիմնական մասերին, ինչպէս են օրինակ ճիւղերը, տերևները և այլն։ Այդպիսի հիւանդութեամբ վնասուած ծառը բժշկելու համար պէտք է մի քանի վերջոկ երկարութեամբ վնասուող տեղի շուրջը եղած կեղևը կտրատել. մէկ կամ երկու կտրուածքներ պէտք է անել նաև ուղղակի վնասուած տեղի վերայ։ Ապա վէրքի շուրջը գոյացած կարծր մասը կտրել և վիրաւորուած մասի ծայրերը հաւասարեցնել։ Որպէս զի վէրքը բոլորովին առողջանայ՝ նորան ծածկում են կաւից, կովի աղբից և մոխրից պատրաստած շաղախով. Որովհետև ծառերի այս հիւանդութիւնը խիստ վարակիչ յատկութիւն ունի, որը վնասել կարող է պտղաբերութեան, ուստի պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ հիւանդութիւնը բժշկելու։

* * *

Պտղատու ծառերը եղեմից պահպանելու միջոց։—Պատահել է շատ անգամ, որ եղեմը վնասել

է շատ ծաղկող ծառերին, որովհետև մատաղ ծաղիկները անկարող են տանել օդի բարեխառնութեան զգալի փոփոխութիւնները, որի ցածրանալը սովորաբար աւելի նկատելի է լուսաբացին. Սորա առաջն առնելու համար կայ մի շատ հասարակ միջոց. լուսաբացին կամ աւելի լաւ ասած մթնոլորտի սովորական տաքութեան անկման զգալի ժամանակից երկու ժամ առաջ՝ ծառերի մէջ տեղաւորում են մի որևէ այրելի նիւթ և այրման ժամանակ աշխատում են որ խարոյկը լոց չարձակէ, և միայն ծուխ բարձրացնէ. Երկիրը սաստիկ պաղելուց պահպանելու համար այս մէկ միջոցը բաւական է համարում. Ծուխը տարածուելով գետնի երեսին, արգելք է դառնում նորա արագապէս պաղելուն և օդի ներքին շերտերի բարեխառնութեան արագ անկմանը. Այսպիսով այն բոլոր պատճառները, որոնք կարող էին վնասել պտղատու բոյսերի ծաղիկներին, վերացուում են

* * *

Ծաղիկները անվնաս պահելու միջոց: — Ծաղիկները անվնաս և թարմ պահելու համար խորհուրդ են տալիս գործ դնել հետևեալ ամենալաւ միջոցը. Պէտք է նախ պատրաստել սապնաջուր, որի մէջ պէտք է լուծել ծաղկի փունջը. Հետևեալ օրը փունջը պէտք է դուրս բերել սապնաջրի միջից և ծաղկի կոթերը մի քանի բոպէ դնել մաքուր ջրի մէջ. իսկ ծաղիկների վերայ միայն ցնցուղով ջուր շաղ տալ. Այս գործողութիւնից յետոյ փունջը կրկին պէտք է դնել նոյն սապնաջրի մէջ, որը կարելի է փոխել միայն երեք օրը մէկ անգամ. Մինչև այժմ կատարած դիտողութիւններից երևում է, որ փունջը, եթէ այդպիսի սապնաջրի մէջ պահելու լինինք, համարեա մի ամբողջ ամիս անվնաս կմնայ.

* * *

Ծաղիկներ յորացնելու մի եղանակ. — Արդէն շատ վաղ ժամանակից սկսած գործադրուում է քաղած ծաղիկները չորացնելու հետևեալ եղանակը, առանց կորցնելու նոցա գոյները. Ծաղիկները գետեղուում են կանգնած ձևով մի բաւականին խոր արկղի մէջ, այնպէս որ նոցա գագաթները արկղից դուրս չերևան և ապա զգուշութեամբ նոցա շուրջը լցնում են գետի լաւ չորացրած աւազ. Երբ ծաղիկները բոլորովին ծածկուած են. լինում աւազով, արկղը դնում են հաց թխելուց յետոյ տաք վառարանի մէջ. Երկու կամ երեք օրից յետոյ ծաղիկները չորացած կլինեն, պահպանելով իւրեանց բնական գոյները:

* * *

Սենեակի օդը թարմացնելու ամենահասարակ միջոց. — Եթէ սենեակում, ննջարանում՝ ծանր, փչացած օդ կայ և օդանցքը բանալով անհնարին է թարմացնել այն, ապա կարելի է խորհուրդ տալ հետևեալ թէև հասարակ, բայց ամենաառողջապահական եղանակը. Սենեակը պէտք է ներս բերել եռացրած ջրով լի մի մեծագիր շրջանաձև ման. Նորա մէջ լցնել 2-3 հացի գդալ բևեկնի իւղ (скипидаръ). Այս գործողութիւնը պէտք է կրկնել օրուայ մէջ երկու անգամ. Ջրային գոլորշիները իրանց հետ կտանեն օդի մէջ բևեկնի իւղ և այդպիսով կթարմացնեն սենեակի օդը, տալով նրան սոսենու անուշահոտ ճաշակի հոտ. Այդ կերպ թարմացած օդը շատ առողջարար ազդեցութիւն է ունենում թոյլ կուրծք ունեցողների վերայ, որոնք տանջուում են հազով և այլն.

* * *

Եղունգներ կրծելու սովորութեան վնասները. — Մօտ ժամանակներս Գրանսիական լրագրերից մէկում մի շատ հետաքրքիր դէպք էր նկարագրուած. Բսան և հինգ տարեկան մի երիտասարդ վերջին 3-4 տարուայ ընթացքում տանջուում էր սատանքսից. բանն այն տեղ հասաւ, որ հիւանդն այլևս անկարող էր կերակուր ընդունել, որովհետև կերածը փսխում էր. Հիւանդը քանի գնում մաշւում, գունաթափուում էր և նշանաւոր չափով կորցրել էր արդէն մարմնի ծանրութիւնը. Նրան բժշկող բժիշկ Մերլիէն նկատել էր, որ հիւանդը սովորութիւն ունի եղունգները կրծելու. Հիւանդին համապատասխան գեղ նշանակելուց յետոյ Մերլիէն պատուիրեց նորա մատներին հագցնել ծածկոյթներ (колпачки), որպէսզի այդպիսով նա միջոց չունենայ իր եղունգները կրծելու.

Անցաւ մօտ մի ամիս և ահա որքան մեծ եղաւ հիւանդի զարմանքը, երբ նա հետզհետէ իրան բոլորովին ազատ զգաց սատանքսը տանջող ցաւերից և փսխելուց.

* * *

Արհեստական կերպով անձրև բերելու մասին շատ է խօսուած եւ գրուած. — Սեն-Բրիւիցի Շարլ Մաիւն անունով մի Գրանսիացի 1859 թուին շորութեան դէմ կռուելու միջոցներ առաջարկեց. բայց նա անյաջող կերպով պաշտպանեց իր գիւտը, այդ պատճառով էլ ոչ ոք չհաւատաց. Սրանից երեք տարի առաջ Ամերիկացիները յիշեցին Շարլ Մաիւնին և մի շարք փորձեր կատարեցին, այնուամենայնիւ նոցա ձեռնարկած փորձերը և ոչ մի արդիւնաւոր հետևանքի չհասան: Ո՛չ թնդանօթների պայթիւնը, ոչ դինամիտի բռնկումները օդի շերտերի զանազան բարձրութեանց մէջ, եթէ օդի մէջ հարկաւոր չափով խոնաւութիւն չկայ, չեն կարող ոչ անձրև,

ոչ գոլորշիների թանձրացում առաջացնել։ Մօտ ժամանակներս ամերիկացիները մի այսպիսի վերջնական եզրակացութեան են հասել։ Լրագրերից մեկում տեղեկութիւն կար, թէ թնդանօթի պայթիւնները, հակառակ Շարլ Մաիւնի ասածներին, ոչ թէ կարող են անձրև յառաջ բերել կամ խոտացնել գոլորշիները, այլ ընդհակառակը, ցրում են ամպերը։ Շտիրիայի ընդարձակ խաղողի այգիների կալուածատէր Ստիգերը Օմիտսրերգ սարի ստորոտներում նոր որթեր տնկելով մատաղ ընձիւղները այդ տեղում յաճախ տեղի ունեցող կարկխից պահպանելու համար հետևեալ միջոցներն է ձեռք առել։ Վեց քառ. կիլոմետր տարածութեան մի քանի բարձրութեանց վերայ շինել է երկաթեայ աշտարակներ, որոնց մէջ դրել է վառօդով և պայթուցիկ հրափամփուշտի գործիքներով լի արկղներ։* Մէկ օր առաւօտեան Ստիգերի խաղողի այգիների վրայ կախուել էին սև ամպեր, որոնք սաստիկ կարկուտ էին գուշակում։ Նրա նշան տալուն պէս տնկարանների մշակները այրեցին հրափամփուշտներով լի արկղերը։ Օդի մէջ միաժամանակ զանազան կողմերից դուրս թռան 60 փամփուշտներ, վառօդագունդեր (петардъ) և պայթուցիկ գործիքներ, որոց ճարճատիւնը տարածուեց շատ հեռու կողմեր։ Այդ փորձի ժամանակ հարևան գիւղերից հաւաքուած մեծ բազմութեան առաջ մութ ամպերը սկսեցին ցրուել, շատ տեղերում լոյս երևաց և ոչ թէ միայն կարկուտ, անձրև անգամ չտեղաց։ Այս փորձը վեց անգամ կրկնուեց և ամէն անգամ, ինչպէս հաւատացնում է Բէլգիական գիտական օրաթերթը, նոյն յաջողութիւնն էր ունենում։

* * *

Մեղուները շատ լաւ են գուշակում եղանակի փոփոխութիւնը։—Այս բանը հաստատում է գերմանական մի ամսաթերթ։ Երբ մեղուները, մինչև անգամ պարզ եղանակներին, չեն դուրս գալիս իրենց փեթակից, պէտք է սպասել, որ շուտով անձրև է լինելու։ Երբ մեղուները խումբ-խումբ և շտապ շտապ վերադառնում են իրենց փեթակները, այդ արդէն հաւաստի նշան է, որ շուտով փոթորիկ է տեղի ունենալու։ Ընդհակառակը երբ մեղուները, չնայած ամպամած եղանակին, առաւօտեան փեթակից թռչում գնում և յետոյ ցրում են զանազան կողմեր, պէտք է սպասել, որ օրուայ ընթացքում եղանակը դէպի լաւը կգնայ։ Ինչպէս հաւատացնում է գերմանական թերթը, դեռ չի պատահել ոչ մի օրինակ, որ այդպիսի դէպքերում արևը չցրուէ ամպերը և ճաշից յետոյ կամ աւելի վաղ՝ եղանակը չպարզէ։ Եղանակի փոփոխութեան վերաբերմամբ մեղուների ցոյց տուած նախագուշակութիւնը, եթէ հաւատալու լիներ գերմանական միևնոյն թերթին, դեռ շատ հեռու է գնում։ Նոքա աշնանային հենց առաջին օրերից սկսած նախագուշակում են թէ ինչ ձմեռ է լինելու՝ սաստիկ ցուրտ կամ թեթև։ Առաջին դէպքում մեղուները մեծով ամուր կերպով փակում են փեթակի անցքը, թողնելով միայն մի փոքրիկ, հազիւ նկատելի անցք։ Իսկ եթէ թեթև ձմեռ է լինելու, նոքա այլևս ոչ մի նախազգուշութիւն չեն ձեռք առնում և իրենց փեթակի անցքը բաց են թողնում։

ԳԱՌԻԼՈՒԾ ԸՐԲԱՏԻ 1899 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ

(Ը. դար).

(Շարունակութիւն) *

Ե.

Խոսրովկի գրքի միութեան լուսաբանութիւնը պարզեց և մի այլ խնդիր, որ հաստատուն կոչուած է նորա ծագման ամենաուշ ժամանակը—terminus ante quem-ը – որոշելու։ Յովհաննէս քահանան իւր դաւանաբանական երկի Ժ.Զ. գլուխն ամբողջապէս քաղել էր Խոսրովկից, ուրեմն վերջինս ապրում էր ոչ աւելի ուշ, քան Յովհաննէս քահանայի գրութեան ժամանակը։

Ա՛յդ, ո՞վ է Յովհաննէս քահանան և ե՞րբ էր ապրում։ Մենք արդէն մի անգամ ակնարկել ենք, որ նա ԺԱ. դարու վերջում և ԺԲ.-ի սկզբին ծաղկած՝ Յովհաննէս սարկաւագ վարդապետն է։ Հաղբատի նշանաւոր վարդապետը։ Բազմաթիւ փաստեր ունինք այս կարծեաց հաստատութեան համար։ բայց մենք

* Տես «Արարատ» 1899 թ. համար Է. եր. 315.